

**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը  
Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ**

Միքելի երեխաներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ ու պայծառ տոնի առթիվ: Տոն, որ համայն մարդկության համար խորհրդանշում է խաղաղություն, երջանկություն և հույս ապագայի հանդեպ:

Յուրաքանչյուր երկրի ապագան երեխաներն են: Մեր բոլոր որոշումների ու գործողությունների առանցքում մենք նկատի ունենք ձեզ՝ սիրելի երեխաներ: Մարզում ապրող երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ստեղծումը մեր առաջնահերթ խնդիրներից է:

Մեծերիս պարտքն է անել ամեն ինչ, որպեսզի ձեր մանկությունը լինի ուրախ ու երջանիկ, որպեսզի դուք ապրեք խաղաղ ու հզոր հայրենիքում, առողջ ու ապահով:

Թանկագիններս, կրկին շնորհավորում եմ ձեզ և ցանկանում անամպ երկինք, խինդ ու բերկրանք, թող ձեր հոգիներում միշտ վառվեն պայծառ լույսեր ու իրականան բոլոր երազանքները:

Մաղթում եմ, որ մանկության ձեր մոլորակում անկեղծ ժպիտն ու սերը հարատևեն, իսկ հաջողությունը ուղեկցի ձեզ միշտ և ամենուր:

**ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան**